ԺԵ ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 8 ՄԱՅԻՍ 1910—ՎԱՌՆԱ — ԹԻՒ 18

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տոլ.
Վեցամսեայ 1. Տոլ.

ԿԱՆԽԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄՆԴ.

ԻՐԱՎՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՑԷ
Rédaction du Journal
«Iravounk»
Varna

Редакция На
Вѣстникъ
«Nравункъ»
Варна

Գրուագիրներ հետ չեն տրուիր

ՍՈՒՏ ԹԷ ՍԽԱԼ

Տէր խմբագիր

Ապրիլ 26 ին Վառնայի պատուարժան հայ ժողովուրդը Տարօնոյ հայ վարժարանաց չգոյութիւնը իմանալով ուզեց այս մասինճշդիրտ տեղեկութիւն առնել։ Միացուստի դիմեց նամակաւ մը Միացեալ ընկերութեանց կեդրոնին։ Ահաւասիկ եկած պաշտօնական նամակը ներփակ Ձեզ կը խրկեմ, խնդրելով որ նոյնութեամբ բարեհաճիք հրատարակել 'ի գիտութիւն Հայ ժողովրդեան։

Այս պաշտօնական նամակէն բացորոշապէս կը հաստատուի, որ Պարոն Անդրանիկ Հերոսը խաբած են Սասունի մէջ դպրոց չի կայ ըսելով։ Վստահ եմ Տիար խմբագիր, որ Վառնայի հայ հասարակութիւնը հոս ընկերութիւն մը հաստատելով պիտի օգնէ Միացեալ ընկերութեանց որպէս զի Տարօնոյ դպրոցներուն ալ աւելի փայլ մը տայ և դեռ պէտք եղած տեղերը ուրիշ դպրոցներ ալ հաստատէ։

Յուսով լի եմ որ Պուլկարիոյ հայ հասարակութիւնը անտարբեր չպիտի մնայ այս մասին մանաւանդ Ձեր լրագրողը ալ՝ իր դոքներն ալ կարդալով։

Մնամ Ձեր դ. ևն
Կ. ՆԻԶԱՄԵԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ
ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

Կ. Պոլիս 4 Մայիս 910

Մեծ. Տիար Կ. Նիզամեան
Ի Վառնա

Ազնիւ Տէր,

Պատիւ ունեցանք ընդունիլ Ձեր 23 Ապրիլ ամսաթիւ գրութիւնը որով յանուն Վառնայի Հայ հասարակութեան կրթասէր մէկ դասակարգին՝ կը փ·փագէիք տեղեկանալ թէ ընկերութիւնն քանի՞ վարժարաններ ունի այժմ Տարօնի գաւառին մէջ՝ Սասունն ալ մէջը ըլլալու պայմանաւ, և թէ Սասունի ո՞ր գիւղերուն մէջ պէտք կայ նոր վարժարաններ հաստատելու։

Շնորհակալութիւններս յայտնելով Վառնայի հայ հասարակութեան՝ ընկերութեանս նկատմամբ ունեցած բարեացակամութեանն ու վստահութեանը համար, կը փութանք Ձեր փափագած տեղեկութիւններն հաղորդել Ձեզ ի ստորև յուսալով որ այդ պատուական գաղութին մօտ դրգիռ մը կըլլան անոնք գաւառացւոց կրթութեան գործին սատարելու համար ամէն օժանդակութիւն ընձեռելու մեզի, որպէս կը խոստացուի Ձեր նամակով։ Ահաւասիկ այս տեղեկութիւնները։

Միացեալ ընկերութիւնք այն կողմերը ունին այժմ ընդ ամէնը 6 վարժարաններ որոնց 2ը Տարօնի և մնացեալ 4ը Սասունի մէջ։ Տարօնի վարժարաններէն մին բուն իսկ Մուշ քաղաքին մէջ է և «Ներսէսեան» Վարժարան անունը կը կրէ 'ի յիշատակ ընկերութեան նոյն քաղաքի մէջ ունեցած նախկին «Ներսէսեան» կեդրոնական Վարժարանին որ այնքան արդիւնք տուած է։ Այս վարժարանը ունի բարձրագոյն նախակրթարանի ծրագիր որ ուսուցչական բաւական լաւ պատրաստուած խումբի մը կողմանէ խնամով կաւանգուի տպայոց։ Երկրորդը՝ Մշոյ Դաշտին մէջ է և կը գտնուի Վարդենիս գիւղին մէջ քիչ մ'աւելի պարզ ծրագրով իսկ մնացեալ չորսը Սասնոյ գաւարակին Դալուորիկ գիւղախմբին մէջ են՝ գիւղային պարզ նախակրթարանի մը ծրագրով։ Ուսուցչաց և աշակերտաց թիւերն են տարեկան ընդհ. ծախքով։

1) Մուշ՝ «Ներսէսեան» կեդրոնական վարժարան։

Թիւ պաշտօնէից	7
» Աշակերտաց	165
Տարեկան ծախք Օս. ոսկ	167

2) Վարդենիս՝ Մշոյ դաշտ

Թիւ պաշտօնէից	3
» Աշակերտաց	80
Տարեկան ծախք Օս. ոսկ.	33

3) Գուրբ՝ Դալուորիկ

Թիւ պաշտօնէից	2
» Աշակերտաց	12
Տարեկան ծախք Օս. ոսկ.	25

4) Յետուգան Դալուորիկ

Ուսուցիչ	1
Աշակերտ	14
Տարեկան ծախք Օս. ոսկ.	8

5) Հարթք՝ Դալուորիկ

Ուսուցիչ	1
Աշակերտ	20
Տարեկան ծախք Օս. ոս.	7

6) Սպղանք՝ Դալուորիկ

Ուսուցիչ	1
աշակերտ	10
Տարեկան ծախք	5
Համագումար	
Պաշտօնեայք	15
Աշակերտք	301
Տարեկան ծախք Օս. ոս.	345

Վարդենիսի ու Դալուորիկի վարժարանաց համար Վիէննայի «Անի» ընկերութիւնը տարեկան որոշ նպաստ մը կը վճարէ մեզի։

Վարժարանաց վրայօք Ձեր ուզած տեղեկութիւնները սոսնք են ահա։

Գալով նոր վարժարաններ հաստատելու պէտքին, ատոր համար ալ մեր Տարօնի շրջանակէն տեղեկութիւններու կոպասենք՝ որոնց հասնելէն ետքը միայն կըրնանք զոհացում տալ այս մասին Ձեր ըրած հարցումին։

Սպասելով ուրեմն Ձեր տալիք նոր տեղեկութեանցը և խնդրելով որ մեր ղդացմանց թարգմանն կանգնիք Վառնայի պատուական Հայ հասարակութեան մօտ։

Մնամք խորին յարգանօք
Ի Դիմաց Հայոց Միաց. Ընկեր.
Տնօրէն Ժողովոյ

Ատենադպիր — Ատենապետ
Ա. Հալաճեան — Ե. Խորասանճեան

ԱԶԳԱՅԻՆ

Հ. Բ. Ընդ. Միութեան Բ. ընդհանուր ժողովոյ նիստը տեղի կունենայ մայիս 8ին Գահիրէի մէջ ընդ նախագահութեամբ Պողոս փաշա Նուպարի։ Օրակարգն է 1) միաձայնութիւն եւ վաւերացումն 1909-1910ի հաշուեկշիռին. 2) Զանազան առաջարկութիւններ եւ թելադրութիւններ։ Ըստ կանոնագրին, ընկերաց ուր ժողովին մասնակցելու իրաւունք ունին այն անդամները որոնք զկիր երկու տարի է ի վեր կանոնաւորապէս կը վճարեն սուռնուազն 25 դրչ. ամսեայ։

Բարեգ. Միութեան կեդր. Ժողովը որոշած է կրկին հետեւեալ նպաստները ղրկել

Զմշկածագ վարժարանին համար անգլիական ոսկի 25։ Ե. բալթուն (Սրվազ)ի համար անգ. ոսկի 1։ Խաբերդ (Տիկնանց Արաքս Ընկերութեան) անգ. ոսկի 15։ Բլսապ աղջկանց վարժարանի հողի եւ շէնքին համար անգլ. ոսկի 30։ Հաճն կարօտեալներուն անգլ. ոսկի 50։ Զօք-ժարզուանի կարօտեալներուն անգլ. ոսկի 6)։ Արարկիրի կարօտեալներուն անգլ. ոսկի 3)։ Ուրֆա անգլ. անգլ. ոսկի 15։ Զէյթունի կարօտեալներու. ն անգլ. ոսկի 50 Համագումար Անգլ. ոսկի. 290։

Կեդր. Ժողովը այս անգամեն կիլիկիոյ Կաթողիկոսին ղրկած է 45 անգլ. ոսկի, որպէսզի նախապէս ղրկուած 100 անգլ. ոսկիէն իր քով աւելցած 5½ օսմ. ոսկիին վրայ բարդելով՝ Միութեան հաշուին գնէ Լաթաքիայի մօտ Արֆալու արարախօս հայ գիւղին 500 արտավար հողը, որ կը պատկանի Օրտուցի Ճէլալ Աղայի։

Հալէպի եւ Երզնկայի մէջ ալ հիմնուած են Հ. Բարեգ. Միութեան մասնաճիւղեր։ Կ. Պոլսոյ Մասնաճիւղը 2000 ոսկիէ աւելի դրամ ստացած է։

Հ. Բ. Միութեան Կիլիկիոյ մէջ հիմնելիք որբանոցին մէջ 10 որբի պաշտպանութիւնը ստանձնած են Տէր եւ Տիկին Պողոս փաշա Նուպար. որոնք այդ 10 որբերուն համար տարեկան 70 անգլ. ոսկի պիտի վճարեն։

—Սերբաստիէն 100ի չափ հայ ընտանիք փափաք յայտներ են Ռուսաստան գաղթելու։ ուստ հիւպատոսը խոստացեր է մարդ գլուխ 10 ոսկի տալ իրը ճամբու ծախք, պայմանաւ որ գաղթողները Ռուսագաւառութիւն ընդունին։

—Երէկ, ուրբաթ տեղի պիտի ունենար Ազգ. Եւեսփ. ժողովոյ նիստը, ուր ըստ ծանուցման Պատրիարք հոր խորհրդակցութեան պիտի առնուէր Վեհ. Կաթողիկոսին Կոնդակը. ոլով կարգիլուի եկեղեցիներու մէջ միթինկ դումալելն։ Կը հաւաստուի թէ վարչութիւնը միջոցներ ձեռք առած է նախորդ նիստի խայտառակութիւնները չի կրկնուելու եւ ազգին երեսփոխանները ազատ հարձակիրներ կաւ ծիքը յայտնելու համար։ Բայց մենք կը կարծենք թէ կարգ մը վախկոտ երեսփոխաններ պիտի զգուշանան նիստին ներկայ գտնուելէ եւ ոմանք պիտի քաշուին ազատամտելէն խօսելէն։ Բայց ամէն պարագայի մէջ եթէ քուէարկութիւնը գաղտնի ըլլայ։ Կոնդակին նպաստաւոր որոշում մը կը սպասուի։

—Մեսրոպեան տ. ուրը սրբազնոց երկու խուժանավար թերթերը Ազատամարտ և Առաւոտ զոր կը վարեն Ռուս

(Տես 4-ի էջ)

ԿԱԹԻԼ ՄԸ
ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԾՈՎԷՆ

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ հայ-ճարտարապետութեան մը գոյութեան մասին ընդհանրապէս շատ թերահաւատութեամբ կը վերաբերուին մեր բարձրագոյն կրթութիւն ստացած մասնագէտ գիտնականներ և բանասէրներ, և այդ թերահաւատութեան պատճառով ալ կ'արհամարհեն իբրև անպէտ նիւթ ուսումնասիրութեան համար։

Անոնց կարծիքով հայ-ճարտարապետութեան ոճը պէտք է որ լինի զուտ յունական և կամ բիւզանդական և այս կարծիքին փաստ կը ներկայացնեն հայ լեզուի և գրականութեան յունականի և բիւզանդականի զօրեղ ազդեցութեան ենթարկուած լինելը։

Ինձ յայտնի չէ թէ որչափ մեծ ճշմարտութիւն է այս կարծիքը հայ լեզուի ու գրականութեան համար, սակայն հայ ճարտարապետութեան համար միանգամայն անընդունելի տրամաբանութիւն է, կապելով լեզուի ու գրականութեան հետ ինքնուրոյնութենէ զուրկ համարել։

Հայ ճարտարապետութիւնը գրեթէ ամենևին չէ ուսումնասիրուած։ Ճշմարիտ է որ յիսունէ աւելի Եւրոպացի գիտնական ճանապարհորդներ շրջած են Հայաստանը, անոնցմէ շատեր իրենց հիացման տպաւորութիւնները բանաստեղծական ներբողներով են արտայայտած, սակայն շատ քիչերն են որ քանի մը տող քննադատօրէն գրած են Հայոց ոճերու մասին։ Եւրոպացի գիտնականը պարտական ալ չէր զուտ հայ-գեղարուեստի նուիրելու իր ժամանակը, քանի որ նա ունէր իր առանձին գործն ու նպատակը իր ուղևորութեան ժամանակ։ Այդ մեր գործը պիտի լինէր, եթէ ոչ լուրջ ուսումնասիրութիւններ, գոնէ իբրև ուսումնասիրութեան համար պատրաստ նիւթ եւրոպական գիտնոց սեղանի վրայ դնել այն անհուն ու անսպառ նիւթերը որոնք ցրուած են Հայաստանի ամեն կողմը։

Կարծողներ կան որ շատ բան եղած է արդէն թէ՛ օտարներու և թէ հայ հնասէրներու կողմանէ, հաւաքուած են նկարներ, գրուած են նկարագրութիւններ, բայց ցաւ ի սիրտ ես պիտի ըսեմ որ այդ ամենը ոչ մի արժէք չունի քանի որ յատկապէս ծրագրուած գիտնական ոճով թեամբ չեն կատարուած և ոչ մի գիտնական անոնցմէ չէ կարող նպատակայարմար արդիւնք արտադրել գլխաւորաբար այն պարզ պատճառով որ եղած նկարներ և նկարագրութիւններ մեծ մասամբ անհարազատ և սխալ են։ Մեծայարգ գիտնական Պր. Ն. Մարր Անիի պեղումներու ժամանակ յուսահատ շեշտով մը յաճախ կը կրկնէր թէ, «Անիի մասին, առաջ բաւական բան գիտէինք, այժմ ոչինչ չի գիտենք» վասն զի օր ըստ օրէ կը տեսնէր որ գրուածներու նման ոչինչ չկար, նորագոյն հետազօտութիւններ և պեղումներ բոլորովին տարբեր և նոր բաներ երևան կը բերէին։

Բնական էր որ մենք չէինք կարող Հայաստանի մէջ ունենալ եգիպտական բուրգեր, յունական Ակրօպոլներ, Բիւզանդական Ս. Սոֆիաներ, սակայն ինչ որ կարելի էր սպասել դարուց ի դարս արեան ճապաղիքներու մէջ լողացող և իր աշխարհագրական աննպաստ դիրքի պատճառաւ ոտնատակ կոխկռտուելու դատապարտուող նահատակ ափ մը ժողովուրդէ, անկից բազմապատիկ աւելի ունինք։

Գեղարուեստի բացարձակ թշնամի մը ուրուական քրիստոնէական նախնական դարերուն, ինչպէս արևմուտքի մէջ, նոյնպէս արևելքի մէջ եթէ ամեն բան քարուքանդ չըլլէր, այսօր Հայաստանը պիտի ունենար ոչ միայն Գդ և Դդ դարերէն սկսեալ գեղարուեստական յիշատակարաններ այլ եւ նախաքրիստոնէական շրջանի եւս հայկական բարձրագոյն քաղաքակրթութեան ապացոյցներ։

Բայց ինչ որ ալ լինի այդ աւերման հետեւանքը, անվիճելի ճշմարտութիւն է որ առաջին դարուն (Ք. Ա.) Հռոմի մէջ, Հռոմէական արուեստի գերեզմանին վրայ իբրև վերջին կոթող Պանթէօնը կանգնուելէն յետոյ, երբ անընդհատ Դ—Ե դար գեղարուեստական կեանքը բոլորովին մեռած էր, երբ դեռ Բիւզանդիոնի աշխարհահռչակ Սոֆիան երկնակամար ոսկեզօծ գմբէթը դէպի երկինք չէր բարձրացուցած Զդ դարուն մէջ, Հայաստանի գեղարուեստի կանթեղը մշտավառ կը պլպլար, և սահմանուած էր օր մը արևմուտքի մարած ջահերուն ալ լոյս մատակարարելու։

Գառնիի մէջ Դդ դարու մէջերն շինուած Տրդատայ թախտ անուանուած աննման կոթողը եթէ Հռոմի ծաղկեալ դարերուն Հռոմի մէջ կանգնէին անկէց աւելի վայելչութիւն և չքեղութիւն չէին կարող տալ։ Եդ դարուն մէջ կանգնուած հայկական եկեղեցիներ՝ որոնց գլխաւորներն են Տիկորի և Երերուքի տաճարները, իրենց վրայ պայծառ կը ցոլացընեն հայ ճարտարապետութեան դարաւոր մշակման և զարգացման դրոշմը։ Եթէ մի (Texier) չի գտնուէր միթէ դարու սկիզբէն՝ Տիկորի տաճարը հետազօտել, գուցէ յաւիտեան պիտի սրբագործուէր պայտաձև կամարներու արաբական ստեղծագործութիւն լինելուն ընդհանուր համոզումը, վասն զի, Տիկորի տաճարը արդէն օրհասական վիճակի մէջ է, և ահա վաղը, ոչ միայն Եդ դարու պայտաձև կամարներ՝ այլ և հայ ինքնուրոյն ճաշակի ապացոյց հիանալի խոյակներ, խարիսխներ և ուրիշ զարդաքանդակներ ընդ միշտ պիտի թաղէ իւր փլատակներուն տակ։

Եթէ Արտաշատ՝ Վաղարշապատ, Արմաւիր, Դուին և ուրիշ մեծամեծ մայրաքաղաքներ անհետ կորան բարբարոսաբար հայ գեղարուեստը փառաւորող Անին դեռ կենդանի է իւր պատկառելի յիշատակարաններով ու ճոխաքանդակ բեկորներով։

Անին թանգարանն է հին դարերու հայկական գեղարուեստի ոճերուն և բանալին իրմէ առաջ կորած գիտութեանց և պատմութեանց առեղծուածները լուծելու։ Անեցիք մեր նոր սերունդի նման չեն արհամարհած իրենց պապենական արուեստները, այլ հետզհետէ նոյնը զարգացուցեր և ճոխացուցեր են առանց նախնականին տիպն ու յատկութիւնները կորսնցընելու։ Եթէ երբեմն ժամանակի ոգին կը պահանջէր օգտուիլ զիրենք շրջապատող մեծ ազգերէն, չեն վարանած փոխ առնել ոճեր սակայն այդ ոճերը չեն պատուաստած հայ արուեստի բունին վրայ առանց զանոնք նախապէս հայացնելու։

Հայ ճարտարապետութիւնը, մեզ ծանօթ նախնական շրջանէն մինչև վերջին անկումը (ԺԴ կամ ԺԵ դար) չորս զանազան վերածնութիւններ ունեցեր է միշտ մէկզմէկէ աւելի տպաւորիչ և չքեղ ձևերու տակ։ Իւրաքանչիւր վերածնութեանց մէջ խիստ աննշան գծերով կը մատնուին օտար ազդեցութեանց հետքերը։

(Շարուն.) Թ. Թորամանեան

ԳԵՂՈՒՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան Ա. Բէհբութեանի սպանութեան մէջ մեղադրուող և հանգուցեալի կալուածներուն կառավարիչ Նոր Բէյազիտցի Արշակ Պետրոսեանը ձերբակալուած է։

—Վեհ. Կաթողիկոսը 300 րուբլի ղրկած է փոխարքայի տիկնոջ, կոմսուհի Վօրանցով Տաշքովին, ի նպաստ Աբարթումանի մէջ կառուցուելիք թոքախտաւորներու յատուկ դարմանատան։ Նոյնպէս Հայրապետը հրամայեր է բոլոր հայ եկեղեցիներու մէջ կախել Թոքախտի դէմ մաքառող Կովկասեան Ընկերութեան գանձանակները նոյն դարմանատան հաստատման ի նպաստ։

— Հայ Ազգագրական Ընկ. Ընդհ. Ժողովը ապրիլ 25ին տեղի ունեցաւ Տփղիսի մէջ ընդ նախագահութեամբ Մշակի խմբագրապետ Տ. Ա. Քալանթարի։ Ժողովը որոշեց Վեհ. Հայրապետէն խնդրել որ Հայ Ազգագր. Ընկերութիւնը Իր հովանաւորութեան տակ առնէ։ Հոն կարդացուած տեղեկագրէն տեսնուեցաւ թէ ընկերութիւնը 1908 տարւոյն մուտք ունեցեր է 3710 րուբլի և 1909ին 3791 ր. Այս գումարները նպատակին ծախսուած են գրեթէ ամբողջապէս։

—Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան Ընդհ. ժողովը եւս տեղի ունեցաւ Տփղիսի մէջ Ապրիլ 22ին, նախագահութեամբ Տօք. Բ. Նաւասարդեանի։ Ժողովը քննեց 1910 համար գործադիր խորհուրդին ներկայացուցած տեղեկագիրը և 1909ի հաշիւները զոր հաստատեց մի քանի դիտողութիւններով։ Որոշուեցաւ նաև անդամակցական վճարը 5 րուբլիէն 3ի իջեցնել։

—Առանց վկայականի զէնք կրելուն պատճառաւ 300 րուբլի տուգանքի կամ 3 ամիս բանտարկութեան ենթարկուեցաւ Մկրտիչ Քալաչեանը, ըստ Տփղիսի նահանգապետի կարգադրութեան։

—Ծանօթ գրագէտ Աւետիս Ահարոնեանը բանտին մէջ գրեր է «Մոխիրի տակէն» նոր պատմուածք մը, որ մօտ օրէն լոյս պիտի տեսնէ։ Խեղճ Ահարոնեան, աւելի բաղդաւոր պիտի ըլլար, եթէ իր ունեցած կարգ մը յիմար բարեկամներուն տեղ խելացի թշնամիներ ունենար։

ՆՈՐ ՍԱՐՍԱՓՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Մուշէն թէ՛ Ազգ. Պատրիարքարան և թէ հայ երեսփոխաններու հասած հեռագիրներ Քիւրտ պէյերու սպառնական դիրքը և հայ ժողովուրդին սարսափահար վիճակը գուժած են։ Ահա այդ հեռագիրներէ մին.

«ՄՈՒՇ, 29 Ապրիլ.—Կուսակալ Թահիր փաշա Ապրիլ 26ին Մուշ հասաւ։ Մուսա և Գասըմ պէյերու, ինչպէս նաև Հաճի Բերօ և Պէլաքի աշիրէթներուն զինուած համախմբումներէն սոսկալով Զախուր գիւղախումբին ժողովուրդն յուզումի մատնուած Մուշ եկաւ։ Ապրիլ 25ին, Գասըմ պէյի սպասաւորներէն Հէլլօ—Էրպօ Մավզէր հրացանով սպաննեց Ալիքսանը։ Մուսա և Գասըմ պէյերը իրենց սպասաւորներով, զինուած վիճակի մէջ, Թահիր փաշան դիմաւորելու գացին և ընդունեցան անոր կողմէ։ Վերջին օրերս տեղւոյս կացութիւնն յուզումի մատնուած է։ Ցանուն հայրենիքի փրկութեան, կ'խնդրենք որ մեր ժողովրդեան հանգստութիւն ապահովուի, խնդիր պատմուին ...

եալ պատուղները, և կամ խաղաղ ժողովուրդին ալ զէնք տրուի

Այս հեռագիրներուն վրայ Պատրիարքարանի մէջ կատարուած խորհրդակցութենէ մը յետոյ, որոշուեցաւ գրաւոր և բերանացի դիմումներ ընել վարչապետ Հագգը Փաշային։ Այդ դիմումներէն յետոյ հայերէս փոխանորդներուն հաւաստուեցաւ թէ պէտք եղած հրահանգները տրուած են կուսակալին, ժողովրդեան միտքը հանգստացնելու համար։ Այս տեսակ հաւաստումներէ մեր փորը կուշտ է, վասնզի Կիլիկիոյ կոտորածներու նախընթացին ալ ապահովիչ հաւաստումներ տուած էր նախարարութիւնը։ Այս օրուան հաւաստումին ալ արժէքը ցոյց տալու համար մեր ընթերցողներու ուշադրութիւնը կը հրաւիրենք Սէտտայի Միլլէթի երկուշաբթիի թիւին մէջ հրատարակուած հեռաւեալ թղթէրէն, զոր վարչապետութիւնը (հաւանաբար տխրահռչակ Ատիլ պէյի գրիչով) ուղղած է Դատական նախարարութեան։

«Հայոց Պատրիարքարանին կողմէ ղրկուած գիր մը կ'ըսէ թէ փախստական Հիւսէյին փաշայի և ուրիշ ցեղապետներու ու իրենց մարդոց դրդումով Պայազիտի գաւառին մէջ Բիւրաները կ'պատրաստուին խռովութիւն յարուցանել, ինչ որ զեկուցուած է նախներքին գործոց նախարարութեան կողմէ, բայց ո և է միջոց ձեռք չառնուիր այսպիսի արարքներու յանդգնողներուն դէմ և դատի չի ձեռնարկուիր։ Նաև զեկուցուած էր թէ Պայազիտի և շրջակայքի, ինչպէս նաև Տիարպէքիրի, Վանի Բաղէշի, Մուշի, Սղերդի և Զոր-սանճագի կողմերէն առնուած լուրերէ կ'տեսնուի որ այն տեղերն ալ հաւանական է որ ծագին Հալէպի և Ատանայի դէպքերուն նման ցաւալի դէպքեր։ Պատրիարքարանին այս գրին վրայ զեկոյցներ և յորդորներ եղան և առնուած թէղքէրէններէն կ'երևի թէ վերոյեշեալ վայրերուն մէջ անդորրութիւնն ապահովելու համար բնաւ թերութիւն գործուած չէ հետապնդութեան և միջոցներ ձեռք առնելու մասին։ Դալով Պատրիարքարանին յիշած խնդիրներուն, Միւսիւս գիւղին մէջ պատահած դէպքն այս է։—Անիկա պատահած է յունիս արին։ Ռուսական սահմանագլուխին վրայ Երթևեկող զինուորական չոկատը նոյն գիւղին բնակիչներէն—որոնցմէ 3ը ռուսահպատակ—10 մաքսախոյս կը ձերբակալէ ու կ'երթայ գիւղ։ Ասոր վրայ Հայ կիներ ու այրեր հաւաքուելով ցոյցեր ու նախատինքներ կ'ընեն, կը յարձակին իսլամ խանութպաններուն վրայ և ասկէ կը ծագի դէպքը։ Կուսակալութեան կողմէ քննիչ կը ղրկուի և խնդրոյն վրայ քննութիւն կատարուելու վրայ է այժմ։ Դալով այն խնդրոյն թէ կին մը մեռեր է իբր թէ յուզուելով եղբօրորդիին ծեծուելէն, կինը ո՛չ թէ վախէն, այլ բնական մահուամբ մեռած է։

«Դալով Ամատի դէպքին, հարսնիքի մը ժամանակ, հակառակ եղած բացարձակ արգելքին, զէնք կ'արձակուի։ Այնտեղ գտնուող զինուորական չոկատը կ'ուզէ գրաւել զէնք արձակող Հայերուն զէնքերը։ Ասոր վրայ կռիւ կը ծագի, և միայն մէկ հոգի կ'վիրաւորուի։ Գրաւեալ ինչքերն ալ 3 ատրճանակ են միայն, ինչպէս տեղեկագրուած է նոյն վայրէն։ Գրուեցաւ որ այս մասին ալ խիստ քննութիւն կատարուի։ Ըսուած էր նաև որ այն կողմերը Բէյրաք աշիրէթապետները կ'գրգռեն իրենց մարդիկը։ Հայերը սոսկումի մէջ են ու հաւանական է որ դէպք ծագի։ Այս մասին յորդորներ եղան որ ամէն միջոց ձեռք առնուի բացարձակապէս առիթ չը տալու ո և է ցաւալի դէպքի։ Համերաշխութեան աշխատո՛ ի միշտ, և նախարարաց խորհրդոյ որոշմամբ, այս պատուէրները պատկանեալ կուսակալութեանց ըլլալով հանդերձ, զեկուցուեցաւ թէ խստիւ պատասխանատու պիտի ճանչցուին այս մասին թերութիւն գործող քաղաքային և զինուորական պաշտօնեայք։ Պատկանեալ տեղերուն հետ կատարուած թղթակցութիւններէ հասկցուած է թէ ճիշդ չեն Պատրիարքարանին կողմէ քանիցս եղած զեկոյցները թէ Բիւրտիսբանի կողմերը Հայերուն դէմ ընդհանուր շարժում մը կ'պատրաստուի։ Պէտք է որ Պատրիարքարանը լաւ քննէ իրեն հասած գրերը և լուրերը և յուզումնառիթ զեկոյցներ չընէ։ Կը խնդրենք որ ասիկա պատշաճ կերպով մը հաղորդէք իրեն։»

ՊՈՒՐԿԱԶԻ ՀԱՆԴԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Տիար Խմբագիր

Թաղական Խորհուրդս պատիւ ունի Ձեր աղնուութենէն խնդրելու որ բարեհաճիք պատ՝ լրագրոյդ միջոցաւ իր խորին շնորհակալութիւնները յայտնել Ռումանիոյ և Պուլկարիոյ հայ քաղաքացիներուն, որոնք սիրայօժար մասնակցեցան ի նպաստ «Ազգային Վարժարանի շէնքին պարտուց բարձման» հանգանակութեան։

Հաճեցէք նաև հրատարակել հետևեալ ցուցակը առ ի գիտութիւն փափաքողաց

Պուլկարիա		
Պալչըք	51	ֆր.
Տօպրիչ	90	» 50 սդ.
Վառնա	306	» 70 սդ.
Ռուսճուք	334	» 50 սդ.
Շումլու	22	»
Սոֆիա	107	» 50 սդ.
Թ. Բազարճըք	27	ֆր.
Դիլիստրէ	100	ֆր.
Ֆիլիպէ	87	» 50 սդ.
Սլիվէն	16	ֆր.
Ռումանիա		
Ճուրճօվօ	45	» 50 սդ.
Պուքրէշ	212	ֆր.
Պուքովինա	41	ֆր.
Ռօման	67	ֆր.
Պօթուշան	38	ֆր.
Կալաց	53	ֆր.
Իզրաիլա	44	ֆր.
Քէօստէնճէ	140	» 50 սդ.
Ֆոքշան	100	ֆր.
	ֆր. 1905,	70

Ի դիմաց Թաղական Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Գ. Զամեան Քէրովբէ Դանիէլեան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆ (*)

Կ. Պոլիս

Արտասահմանի Հայրենական Հայրենակիցներ

Ասկից առաջ կոչ մը ուղղած էինք Ձեզ, բացատրելով Աշխատանքի Տան կազմութիւնը, իր գերագանցապէս գործնական նպատակը, յեղաշրջելու համար բարեգործութեան միջոց հիմայ գոնէ ամբոխը—ողորմութիւնը տալով աշխատանքի փոխանակ նպաստի։ Ցիշած էրինք թէ Աշխատանքի Տունը Կիլիկիոյ ետչ ալ բաներ է իր մասնաճիւղը, որպէս զի փոխանակ որբերը իրենց մօրը եւ հայրենիքի գիրկէն հեռացնելու եւ «տրբանոց»ներու մէջ զետեղելու, թողուլ իրենց մօրը կամ մօտաւոր ազգականներուն մօր եւ այս կերու գործ հայրայրուի աշխատանքի մէջ, ապրելու եւ ապրեցնելու համար որբերը։ Կրնուի՞ ենն գործն ալ ցերեկօթիկ վարժարաններուն թողլով։

Արդ, թէպէտ դ՝ու չատ քիչ. բայց շնորհակալութեամբ կը ծանուցանենք թէ մինչեւ ցարդ արտասահմանէն ուղարկուած ենք ի նպաստ Կիլիկիոյ մասնաճիւղին 11232 դրչ. մանրամասնութիւնները քիչ ատենէն կը հրատարակենք։

Հանձնի մասնաճիւղէն վերջերս մեր ստացած մէկ նամակէն կը տեղեկանանք որ արդէն ստացած են մեր ղրկած առաջին դրամը 50 օսմ. լիրա եւ բացած են աշխատանոց մը ասեղնագործութեան։ Մօտ օրերս պիտի ղրկենք նաեւ 50 լիրա հրահանգ տալով որ բանաձեւ մ՝կեղէն կարելու ճիգ մը ալ։ որուն համար տրամադրելի ըրած ենք կարի մեկենաներ եւ պէտք եղածները։ Այդ մասնաճիւղը պիտի չանայ, որքան կարելի է չատ թուով կիներու գործ տալ աշխատանոցի մէջ. այնտեղ պիտի սովրին եւ որբանոցի աղջիկները, եւ մենք պիտի օգնենք որ աշխատանոցի արտադրած ապրանքները վաճառուին ի նպաստ նոյն աշխատանոցին։ Այդ մասնաճիւղը կազմուած է տեղական առաջնորդ Ներսէս վարդապետ Դաւիթեանի նախագահութեամբ։

Սակայն, աւելի չատ թուով աշխատաւորներու գործ հայթայթելու համար եւ ապագային աշխատանոցն այսպէսի վիճակի մէջ դնելու համար, որ պէս զի ինքն իր ապրուստով իր ծախքերը կարենայ հոգալ։

Նոյն այդ մասնաճիւղը եւ վարչական ժողովը համոզուած ենք, որ պէտք է ուրիշ ճիգեր ալ հատատել հոն, օրինակի համար կապերի կամ գորգագործութեան, եւ այլն։

Այդ ճիգերը բանալու համար ստիպուած ենք կրկին դիմել արտասահմանի հայութեան նիւթական օժանդակութեան։

Աւելորդ կը սեպենք զգացումներ շարժելու խօսքեր ընել։

Կը սիրենք յուսալ որ արտասահմանի հայութիւնը այսքան բացատրութիւն բաւական պիտի սեպէ եւ ինքնաբերաբար նախաձեռնիր պիտի ըլլայ օգնելու այդ գործին բարգաւաճմանը։

Կը խնդրենք որ արտասահմանի հայ թերթերը եւ բարեգործական ընկերութիւնները նախաձեռնութիւնը ստանձնէին նիւթական այդ օժանդակութեան գործը գլուխ հանելու համար արդիւնաւոր կերպով։

Կը յիշեցնենք որ որ եւ է դրամ՝ ընդ՝ ղրկուիլ «Աշխատանքի Տան» համար մեր։ Նախագահ Տօքթոր Վահրամ էֆ Թորգոմեանի անունով, կամ ուղղակի մեր Գրասենեակի հասցէին.—

Գալաթիայի Գալուղ № 103

Բիւրա Կ. Պոլիս

(*) Հակառակ մեզ եղած խոստումին, տակաւին չէ ստացած այս հաստատութեան կանոնագրութիւնը եւ չենք գիտեր թէ Ազգ. Պատրիարքարանի համաձայնութեամբ է թէ պաշտպանուած կազմակերպութիւն մըն է։ Մ. Խմբ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք Կովկասահայոց Ազգագրական Ընկերութեան Ազգագրական Հանդէսի՝ ներկայ տարուոյ առաջին թիւը։

Եռամսեայ Հանդէսի այս թիւը պատկերազարդ է եւ բաղկացած 208 մեծադիր էջերէ։ Տարեկան բաժանորդագինն է 13 ֆր. հասցէն է

Խմբագր. «Ազգագրական Հանդէսի» (Կովկաս) Թիֆլիս

Բազմարդիւն ուսուցիչ Տ. Մի՛բաՑովհաննէսեանի մէկ նոր երկասիրութիւն, ԴՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՆԵՐ եւ անոնց բնական արժէքը։ Ցարգոյ հեղինակը խոր հմտութեամբ եւ անկողմնակալ գրչով մը կը գնահատէ ու կը քննադատէ ան ու աս հեղինակի երկասիրութիւնները, խիստ չափկան ու ետաքրքրական պարբերութիւններ ընծայելով իր ընթերցողներուն։ Գինն է 10 դրչ։ կը ծախուի Կ Պոլսոյ բոլոր գրավաճառներու քով։

* * ԳԻՍՍԻՈՐԵՐԸ անուամբ գրքոյկ մը լոյս ընծայած է Պալէ՝ց գրատունը։ Այս հաստատութիւնը որ չատ լաւ գիտէ սոիթներէն օգտուիլ, այս անգամ ալ Հալէպի գիսաւորին մօտալուտ անցքին սոիթիւ այս գրքոյկը ճիշդ ժամանակին հրատարակ դրած է. անշուշտ ամէն մարդ պիտի հետաքրքրուի ասով. մանաւանդ երբ կարդայ անոր կողքին վրայ սարսռազդեցիկ խօսքը. «Աշխարհն պիտի կործանի՞ մայիս 21ին։»

Գինն է 5 դրչ։

Նոյն գրատունէն ստացանք ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ։ գրքոյկը եւս, որ մեծանուն հայ գիւանագէտին կեանքը ու գործերը կը պատկերացնէ թարգմանուած է Էմիլ Պէրդրանի արտադրութիւններէն. թարգմանիչն է Տ. Մեսրոպ Նուպարեան։ Գինն է 5 դրչ։

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ թատերգութիւնը լոյս տեսաւ Ս. Ղազարու տպարանէն հեղինակութիւն տօքտ. Կ. Ց. Փաշեան խանի։

Գինն է 1 ֆր.

քէն Զարզարեանի եւ Սեթեանի պէս ծեւաղէմ ստահակներ որոնց անցեալը ծանօթ է արտասահմանի հայութեան եւ որոնց դիմակները բազմիցս պատռուած են այս սիւնակներու միջոցաւ, առիթ առնելով Անդրանիկի հետ մեր ընդհարման դէպքը՝ իրենց յատուկ փողոցային լեզու մը վերականեր են գործածել Իրաւունքի եւ իր խմբագրին դէմ։ Մենք աւելորդ կը համարենք անգամ մըն ալ զբաղիլ այդ ստահակներով՝ որոնք այսօր յանցգնած են Իզմիրլեան վեհ. Հայրիկի դէմ իսկ լուտանքներ ուղղելու, իրենց խաչագողական եւ խուժանավարական էնթրիգներուն առջեւ եկեղեցւոյ դուռը գոցելուն առթիւ. ալ ի՞նչու չընեն մեզ դէմ երբ մենք աւելի կանուխ իրենց դիմակները պատռողներէ մէկն եղած ենք։

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐՔԻԱ

Մուշ Սանճաղընտա Քիւրտ պէյլէրի մայէթ սիլահլըլարը իլէ քէօյլիւլէրէ էքսէրի և մէնիւլէրէ զարըը թէհտիտամիզ հարէքէթտէ պուլընտըգլարընտան տօլայը Ս. Պատրիարք Պապը Ալիյէ եէնի պիր թագրիր վէրմիշ տիր։ Պու թագրիր իւզէրինէ Նէզարէթտէն Անատօլու վալիլէրինէ շէտիտ էմիրլէր վէրիլուպ պիր վուգուաթ զուհուրինտէ քէնտիլէրի շախսէն մէսուլ թութուլաճագլարը իխթար օլունմուշ տըր։ Պիթլիս վալիսի պու էմիրնամէյի ալմասընտա Մուշա գօշար, ֆագաթ օրատա էհալինին շաշէպի օլան Քիւրտ պէյլէրինտէն գարշըլանըր վէ քէնտիսինէ օնլարա րայէթ իթմէկէ պաշլար։

—Օրաճսլօյ նամ կազէթանըն տույուպ խազտըըղընա պինաէն, Պապը Սէրասքէր պիր գանուն լաիհասի գալէմէ ալմըշ իչպու լաիհէ մուճիպինճէ Անատօլու էհալիսինին պա խուսուս Քիւրտլէրին սիլահլարը թօփլանըլաճագ ըմըշ։

—Անատօլունըն էքսէրի մահէլլէրինտէն ալընան հավատիսաթ, պու սէնէ նէպաթաթըն գօլլըղընը վէ չիֆտիտէն պուղտայըն ուճուզլանտըղընը պիլտիրիյօր։

—Ալպանիատան վէրիլէն խապէրլէրէ պինաէն, ասըլար տաղըլմըշ վէ ասայիշ իադէ օլունմուշ. հալպուքի տիկէր թարաֆտան էլան ասքէր սէվգ օլունիյօր։ Սէլանիկտէն մայիս 5 թարիխլի թէլէկրաֆ տիյօր քի՝ Առնավուտլար թէքրար Տրանիցատա թօփլանմըշ օլտըղընտան ասքէր օլ թարաֆա իլէրլէմէկէ պաշլատը։ պու կիւնլէրտէ շէտիտ պիր միւսատէմէ պէքլէնիլիր։ Ճէրնալօվա գավկասընտան սօնրա Սերպիայա գաչմըշ օլան իքի առնավուտ րէյիսլէրի սըրպ հիւքիւմէթի սամանը հիւքիւմէթի է թէսլիմ իթմիշ տիր։

Եանեա վիլայէթի տախիլինտէ քի Առնավուտլար տախի պազը վէրկիլէր վէ ասքէր վէրմէք իսթէմէյօրլար։ Հիմարա նահիյէսի պու պէհանէ իլէ իսյանա պաշլամըշ օլմասը իւզէրինէ հիւքիւմէթ օրայա ասքէր սէվգ իթմիշ վէ իքի կիւն զարփընտա իթտաֆ կէօսթէրմէզլէրսէ քէօյլէրի թօփա թութաճագընը իխթար էյլէմիշ։ Բում Բաթրիգհանէսի վէ մէպուսլարը իշէ միւտախէլէ իտէրէք Հիմարա խրիսթիանլարընը ասքէր վէրմէկէ գանտըրմըշ տըրլար։

Պիր հավատիսէ պինաէն, Շէվքէթ բաշա Ալպանիատա ասըլար իլէ սուլհ իչիւն մուխապէրէ վէ միւզաքէրէյէ պաշլամըշ տըր։

—Մաքէտօնիատա թէքրար Պուլկար չէթալարը իշէ պաշլամըշլար։ Մալէշտէ պիր Պուլկար չէթասը իքի Ուլահ տաղա աշըրմըշ։ Քէզա մէզքիւր գազատա եէնի եէրլէշէն Պօշնալը իսլամ մուհաճիրլէրին Տրակօն նամ քէօյտէ պիր գաչ էվ Պուլկարլար եագմըշլար։ Օսմանիէտէ 100 քիշիլիկ պիր Պուլկար չէթասը մէյտանա չըգմըշ վէ ասքէրիլէ պիր տէֆա վուրուշմուշ տըր։

—Կիրիտ մէպուսլարը Եունան գըրալը նամընա եէմին իթմիշ իտիլէր պու սէպէպլէ Պապը Ալի վէ համի տէվլէթլէր պէյնինտէ մուէսիր նօթալար միւպատէլէ օլունտը։ Կիրիտ գապինէսի, եանի մինիսթէրլէրի տախի Եունան գըրալընա սատըգ պուլունմագ իչիւն եէմին իթմիշլէր տիր։ Պու խապէր Թիւրքլէրի պիր աղ տահա ալէֆլէնտիրէճէք վէ պէլքի տէ Եունանիստան իլէ եէնի պիր մուհարէպէյէ սէպէպ օլաճագ տըր։

—Կիրիտտէն ալընան էն սօն հավատիսէ պինաէն, ատանըն մէճլիսի միլլիսինտէ Մ. Վէնէզուէլօս հիւքիւմէթին բրօկրամընը օգույարագ, Կիրիտին Եունանիստան իլէ գաթիէն պիրլէշտիկինի, ատատա Թիւրք հիւմէթինտէն հիչ պիր էսէր պըրագըլմայաճաղընը Եունանիստանըն վէ ումում Բում միլլէթինին հուգուգընը մուհաֆազասը իչիւն հէր պիր ֆէտաքեարլըղտա պուլունըլաճաղը վէ պունտան սօնրա Թիւրքիա իլէ հէր պիր մինասէպաթըն քէսիլէճէկինի վէ Կիրիտլի իսլամլարըն մուհաֆազասը թէէմին օլունաճաղընը պէյան իթմիշ տիր։

Պու բրօկրամ մէճլիսի միլլինին պիւթիւն խրիսթիան մէպուսլարը թարաֆընտան իթթիֆագը արա իլէ թասվիպ օլունմուշ վէ ատանըն հիւքիւմէթի հազըրէսինէ մէզունիյէթի թամմէ վէրիլմիշ օլմաղլէ 45 կիւն իչիւն մէճլիսի միլլի գաբատըլմըշ տըր։ Հիւքիւմէթ 10.12 քիշիտէն միւրէքքէպ պիր հէյէթի մախսուսէ թէշքիլի իլէ էվրօբայա եօլլայաճագ, Կիրիտին Եունանիստան իլէ գաթիէն պիրլէշտիկինի համի տէվլէթլէրէ արզ իթմէք իչիւն։

Կիրիտին իսլամ մէպուսլարը իսէ Պապը Ալիյէ պիր թէլէկրաֆ չէքուպ, ատատա պուլունան 50,000 իսլամլարըն մալ ու հայաթլարընըն մուհաֆազասընը իսթիրհամ իթմիշլէր։

Թիւրք վիւքէլասը սոմանլը տօնանմասընը եօլա չըգարմըշ իսէտէ, ամիրալա վէրիլէն թալիմաթը կիզլի թութիյօր։

Կիրիտ իշլէրի պու հալլէտէ իքէն Թիւրքլէր հէր նէ գատար Եունանիստանա գարշը մուհարէպէ գօրգուսընը վէրիյօրլար իսէտէ, Եունանլըլար պիզ մուհարէպէտէն գօրգմայըզ. զիրա չիմտիքի գուվվէթիմիզ վէ օրտումըզ 1897 տէքի գուվվէթիմիզտէն զիյատէ վէ մունթազամ տըր, տէյօրլար. պա խուսուս Թիւրքիանըն տախիլի գարըշըգլըղը Եունանլըլարա ճէսարէթ վէրիյօր։

—Սըրպ սինօրընտա Թիւրքլէ վէ Սըրպիա ասքէրլէրի պէյնինտէ պիր միւսատէմէ վուգու պուլմուշ վէ պիր գաչ Թիւրք թէլէֆ օլմուշ տըր։

—Իրանիօն սիւկիւրթա չիրքէթինէ գարշը Սիս Կաթողիկոսըն աչտըղը տավանըն մահքէմէ գարարընը ֆրանսըզ ավուքաթը իմզալամաըլար։ Պու տէֆա խարիճիյէ նազըրը Րիֆաթ բաշա ֆրանսըզ էլչիսինէ պիր նօթա եօլլայուպ, մէզքիւր գարարնամէյի իմզալամալարընը թէքլիֆ իթմիշ տիր։

—Եէմէն մէպուսլարը վէ նազըրլար պէյնինտէ միւզաքէրէ օլունտըղը իւզրէ Հիլմի բաշանըն թէրթիպ իթմիշ օլտըղը իսլահաթ ճէտվէլինին պազը պէնտլէրի իճրա օլունաճագ։

«ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ»

Ժէօն-Թիւրք կառավարութեան քըմահաճ մէկ նոր որոշումով Թուրքիոյ մէջ վաճառումը արգիլուեցաւ այս գեղեցիկ երկասիրութեան որ ողբացեալ Արփիարի գլուխ գործոցն է և կարժէ որ ամէն հայու տուն անկէ հատ մը ունենայ։

Արտասահմանի մէջ Կարմիր Ժամուց. միակ կեդրոնատեղին է «Իրաւունք»ի խմբագրատունը։ Կը գտնուի նաև հետեւեալ տեղերը՝

ՎԱՐՆԱ Տ. Արամ Պոլէմճեան ուսուցիչ ի Խան-Խալի

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ Տ. Յարութիւն Աբրահամեան՝ Մէյտան փողոց

ՊՈՒԳՐԷՇ Տ. Ղ. Կոնիկեան Ազգ. Վարժարան

ԳՕՆՍԹԱՆՑԱ Տ. Սիսակ Մելիքեան

ՍՕՖԻԱ Օր. Զ. Թաշճեան Ազգ. Վարժարան

ՌՈՒՍՉՈՒՔ Տ. Համբարձ. Գրիգորեան

Գինն 1 ֆր.

Ամերիկայի և Կովկասի մէջ վաճառող չէ որոշուած տակաւին։

Վաճառելու համար չատ ուզողներուն մասնաւոր զեղչ՝ իսկ վճարումը կանխիկ։

ԻԽԹԱՐ

Ապօնէլէրիմիզին կազէթա պէտէլինի կէօնտէրմէլէրի թէքրարէն րիճա օլունուր։ Պէշէն սէնէլէրտէն պօրճլու օլանլար էկէր պու այըն 20 սինէ գատար կէօնտէրմէզլէր իսէ իսիմլէրինի կազէթայա տէրճ իթմէկէ մէճպուր օլաճաղըզ։

ԹԻՃԱՐԷԹ

ՃԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ			
Վակօն	100 քիլօ.		17.50–17.80
Արպայը	15–80	լիպ.	15.13
ԱՐՊԱ			
Վակօն	100	քիլօ	10./10.50
Արպայը	45–52	լիպ.	6.65
ԵՈՒԼԱՖ	100	քիլօ	11./11.30
ՉԱՎՏԱՐ	100		12.50
Արպայը			10 55
ՖԱՍՕՒԼԻԱ	100	քիլ.	22.
ՏԱՐԸ	100	քիլօ	16/17
ՔՕԼՕԶ	արպայը 55–60	լպ.	եօգ
ՄԻՍԻՐ	100	քիլօ	11./12.
արպայը	75	քիլօ	8.60

ՊԱԶԱՐԼԻՔ

Վառնա բիրաղասընտա պազգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթըն ֆրանք իլէ.

ԳԱՀՎԷ		2. 15/2. 30
ՇԷՔԷՐ նէմչէ քէլլէ		1.
ՇԷՔԷՐ քէսմէ	սանտըգ	—51
ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը		47
» Ինկիլիզ »		31.
» Րիզօն »		53.
» Ֆիլիպէ »		47.50
ԿԱԶ Պաթում Սանտըղը		10.
» Թրայան »		9.70
ԶԷՅԹԻՆ եաղը քիլօ		1.50—1.70
ԳՕՒՐՕՒ իւզիւմ		60./70
Եումուրթա		4.40

Издатель: Х Курбетянъ

Տպարան «Իրաւունք»ի Վառնա

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՒՈՒՆՔ»Ի

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ ՄԱՔՈՒՐ ԵՒ ՃԱՇԱԿԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՈՐԾԵՐ

Հարսանեկան հրաւիրագիր, Այցետոմս, Նամակագլուխ, Պահարան
Պարտամուրհակ, Հաշուեցուցակ և ուրիշ գործեր

Հայերէն, Պուլկարերէն եւ Ֆրանսերէն

Մեր գնահատելի ճաշակին գոհացում տալու համար Տպարանս իր տրամադրութեան տակ ունի ամենանորագոյն սիստեմի գործիքներ և տառեր

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ ՄԸ